Մարտիրոս քեռֆխայ Փէրիու. }○
Բաղրամ որդոյ Մարտիրոս. }○

Օրինակ նամակի զինուորական իշխանութեան 'ի վերայ Մայրաքաղաքաց:

ԳԼՈՒԽ Զ.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեան 'ի յաշխարհէն տուրուբերանոյ, և թուղթ փոխանորդութեան նոցա ընդ քեզ Սահակայ բագրատունիդ, և երդմնելով քոյ առաջի ատենի տանուտերաց հայոց հաստատեցաք 'ի սիրտս մեր հաւատարիմ քեզ 'ի վերայ տանն հայոց, տուաք քեզ նամակ պաշտօնի իշխանութեան մայրաքաղաքին յերևանու, որ է 'ի աշխարհին արարատեան ժամանակաւ երիս ամաւ, զի դու խոհեմազարդ Սահակ բագրատունիդ կացցիս և մնասցես զօրագլուխ 'ի վերայ բոլոր զօրաց քաղաքին երևանու ընդ խորհրդակցօք քովք, հրամայեսցես 'ի վերայ զօրաց ամենեցուն որք կան և ընակին 'ի վիճակս քաղաքին յերևանու ըստ կերպին և նմանութեան որպէս հրամայէ պատուելի նախարարն Հայոց 'ի վերայ ամենայն զօրութեան զինուորաց 'ի յերեսս բոլոր աշխարհին հայոց, և դու 'ի Սահակ բագրատունիդ ընդ խոր-